



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ

---


” 12 ” մարտ 2011 թ.

թիվ 07-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթները»՝ համաձայն հավելվածի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության  
2011 թվականի մարդահամար

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
վիճակագրության պետական խորհրդի  
2011 թվականի մարտի 12-ի թիվ 07-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՊՉԱԿԱՆ ԵՎ  
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

## I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 301-Ն որոշմամբ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում հերթական մարդահամարն անցկացվելու է **2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը** ներառյալ:

2. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն մարդահամարն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված **ծրագրով`** բնակչության թվաքանակի, կազմի, սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքի, աշխարհագրական տեղաբաշխման, զբաղվածության (տնտեսական ակտիվության), կրթության և տնտեսությունների բնակարանային պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար:

3. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի անցկացման համար մարդահամարի հաշվառման պահ է սահմանվել մարդահամարի առաջին օրվա` **հոկտեմբերի 11-ի լույս 12-ի կեսգիշերը` 00<sup>00</sup> ժամը**: Բնակչության հաշվառման ժամանակ անհրաժեշտ է հարցումն իրականացնել` հաշվի առնելով միևնույն հստակ սահմանված պահը, որը հաշվառման իմաստով համարվում է հաշվառման (կրիտիկական) պահ, այսինքն` մարդահամարի հարցաթերթում **չպետք է ներառվեն այդ պահից հետո ծնված երեխաները**, ովքեր դեռևս ծնված չեն եղել կրիտիկական պահի դրությամբ, սակայն պետք է **ներառվեն նշված պահից հետո մահացածները**, ովքեր դեռևս ողջ են եղել այդ պահի դրությամբ:

4. Մարդահամարը սկսվելու է հոկտեմբերի 12-ի առավոտյան ժամը 8-ին և շարունակվելու է մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ:

5. **Մարդահամարն անցկացվում է հաշվարարների կողմից`** շրջագայելով իրենց տեղամասում տեղակայված բոլոր տները, բազմաբնակարան շենքի յուրաքանչյուր բնակարան, շինությունները, ներառյալ` հիմնարկների, կազմակերպությունների կողմից զբաղեցրածները, (հետայսու` **տուն (շինություն)**), որտեղ բնակվում կամ կարող է բնակվել բնակչություն, բնակչությանը հարցում անելու և **տեղեկությունները մարդահամարի հարցաթերթում գրառելու միջոցով**: Բնակչությունը հաշվառվում է ըստ բնակության վայրի, ներառյալ` ժամանակավոր բնակության, այսինքն ըստ այն տան, բնակարանի, որտեղ հարցվողը գտնվել է **մարդահամարի** պահին:

6. ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ հաշվառման ենթակա են մարդահամարի կրիտիկական պահին Հայաստանի Հանրապետությունում գտնվող (մշտապես և ժամանակավորապես) բոլոր անձինք (ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք), ինչպես նաև մշտապես (սովորաբար) բնակվող, բայց մարդահամարի պահին հանրապետությունից բացակայողները:

7. ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով հաշվառվելու է բնակչության երկու կատեգորիա՝ մշտական բնակչություն, ներառյալ ժամանակավոր բացակայողները և առկա բնակչություն՝ ներառյալ ժամանակավոր ներկաները (սույն դրույթներում օգտագործվող հասկացությունների բացատրությունը տես **հավելված 1-ում**):

8. **Մշտապես ներկա, ժամանակավոր ներկա և բացակա** անձանց վերաբերյալ մարդահամարի հարցաթերթում տեղեկությունների գրառման կարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին» հրահանգով:

9. Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր մարդահամարի անցկացման պահին մեկնել են **արտասահման** ուսման, գործուղման, հանգստի, բուժման նպատակներով, հյուր են գնացել հարազատներին և ծանոթներին, շրջագայել են որպես զբոսաշրջիկներ, **անկախ մարդահամարի պահի դրությամբ նրանց բացակայության ժամկետից**, հաշվեգրվում են իրենց **մշտական բնակչության վայրում**՝ բացակայության տևողության և պատճառի մասին պահանջվող նշումներով:

10. **Մշտական բնակավայր**, որպես կանոն, համարվում է այն վայրը՝ քաղաք, գյուղ, տուն, բնակարան, որտեղ հարցվողը մշտապես (սովորաբար) անցկացնում է իր ժամանակի մեծ մասը (որպես կանոն գիշերում է): Այդ վայրը կարող է համընկնել կամ չհամընկնել հարցվողի գրանցման (հաշվառման) հասցեի հետ:

11. Մարդահամարի հարցաթերթում գրառումները կատարվում են անկախ գրանցման (հաշվառման) առկայությունից ու բնույթից՝ մշտական կամ ժամանակավոր:

**Օրինակ**՝ եթե տվյալ անձը գրանցված է մի հասցեում, բայց բնակվում է մեկ այլ վայրում, ապա նրան պետք է հաշվեգրել ըստ փաստացի բնակչության վայրի:

12. **Օտարերկրյա պետություններում**՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելություններում, հյուպատոսություններում և ներկայացուցչություններում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ու իրենց հետ ապրող ընտանիքի անդամների հաշվառումն իրականացվում է **տվյալ երկրում**՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցված կարգով, Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կողմից՝ առանց բացակայելու կամ ժամանակավոր գտնվելու մասին նշումի, իսկ Հայաստանում՝ իրենց բնակչության վայրերում, նրանց վերաբերյալ տվյալները մարդահամարի հարցաթերթում չեն լրացվում/**մարդահամարի հարցաթերթ չի լրացվում**:

13. **Հայաստանում**՝ օտարերկրյա պետությունների դեսպանատների և դիվանագիտական առաքելությունների ու միջազգային կազմակերպու-

յունների աշխատակիցները և իրենց հետ ապրող ընտանիքի անդամները, **դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված օտարերկրյա քաղաքացիները**, միջազգային իրավական նորմերի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի ժամանակ հաշվառման **ենթակա չեն**: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ) հետ համաձայնեցված կարգով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր դեսպանատներին, գլխավոր հյուպատոսություններին և միջազգային կազմակերպություններին տեղեկացնում է մարդահամարի անցկացման ժամկետների և կարգի մասին:

14. **Հայաստանում** մշտապես (մեկ տարի և ավել ժամկետով) բնակվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք հաշվառվում են Հայաստանում՝ ըստ իրենց բնակության վայրի, ընդհանուր կարգով:

15. Մարդահամարի կրիտիկական պահին գիտական, առևտրական և այլ պատվիրակությունների կազմում Հայաստանում գտնվող, ինչպես նաև ուսման, որպես զբոսաշրջիկ և այլ նպատակներով Հայաստան եկած օտարերկրյա քաղաքացիները հաշվառվում են ընդհանուր հիմունքներով, որպես **ժամանակավոր ներկաներ**՝ ըստ գտնվելու վայրի:

16. **Հայաստանում** մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք հաշվառվում են Հայաստանում՝ ըստ իրենց բնակության վայրի, ընդհանուր հիմունքներով:

17. Մեկ տարի և ավել ժամկետով **Հայաստան**՝ տեղական և օտարերկրյա կազմակերպություններում (բացի օտար երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատող դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված օտարերկրյա քաղաքացիների) պայմանագրային աշխատանքի կամ ուսանելու եկած անձինք (անկախ քաղաքացիությունից) հաշվառվում են Հայաստանում՝ ըստ իրենց բնակության վայրի, ընդհանուր կարգով:

18. Արտերկրից, ներառյալ ԱՊՀ երկրներից մշտական բնակության նպատակով Հայաստան եկած անձինք, ովքեր դեռևս կացության կարգավիճակ չեն ստացել, հաշվառվում են ընդհանուր կարգով՝ ըստ բնակության վայրի, տեղամասային հաշվարարի կողմից:

19. Ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց հաշվեգրումն իրականացվում է ոչ թե զորամասերում, այլ **տանը**՝ իրենց տնային տնտեսության կազմում: Զինծառայողները, ովքեր ծառայությունն անցնում են պայմանագրային կարգով և բնակվում են բաց տարածքներում, հաշվեգրվում են իրենց տնային տնտեսությունների կազմում՝ ընդհանուր կարգով՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին» հրահանգի:

20. Քրեակատարողական հիմնարկներում (կալանավայրերում, ազատազրկման վայրերում և նմանատիպ այլ հաստատություններում) գտնվող անձանց՝ բնակչության առանձին խմբերի, հաշվեգրումը մարդահամարի ժամանակ իրականացվում է ՀՀ ԱՎԾ և իրավասու մարմինների կողմից համատեղ սահմանված կարգով և ժամկետներում:

***Ընդ որում, իրենց նախկին բնակավայրում այդ հաստատություններում գտնվող անձանց վերաբերյալ տվյալները մարդահամարի հարցաթերթում չեն ներառվում:***

21. Օդանավակայաններում ուղևորության մեկնելու սպասող ուղևորները հաշվեգրվում են **հոկտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը:**

22. Բուժման նպատակով հիվանդանոցներում (եթե նրանց այնտեղ գտնվելը չի գերազանցել մեկ տարին), ծննդատներում, առողջարաններում, հանգստյան տներում (բացի մեկ-երկուօրյա), հյուրանոցներում և նմանատիպ այլ հիմնարկներում և կազմակերպություններում գտնվող անձանց, ինչպես նաև գիշերօթիկ դպրոցներում սովորողների, **որպես ժամանակավոր ներկաներ**, իսկ իրենց մշտական բնակավայրում **որպես բացակայողներ** (բացի դրանցում մշտապես բնակվողներից), հաշվեգրումը կատարվում է նույն հիմնարկի և կազմակերպության վարչակազմի կողմից առանձնացված հաշվարարի կամ հիմնական տեղամասի հաշվարարի կողմից՝ կախված տվյալ հիմնարկում և կազմակերպությունում առկա տեղերի (մահճակալների) քանակից, եթե նրանց մշտական բնակավայրը չի գտնվում այդ նույն համայնքի (քաղաքային, գյուղական) սահմաններում, որտեղ հիվանդանոցն է, առողջարանը, հանգստյան տունը, ծննդատունը, նշված դպրոցը կամ դպրոցին կից գիշերօթիկը:

Եթե վերը նշված անձանց մշտական բնակավայրը գտնվում է նույն համայնքի (քաղաքային, գյուղական) սահմաններում, նման դեպքում այդ անձանց հաշվեգրումը կկատարվի իրենց տնային տնտեսությունների կազմում՝ ըստ մշտական բնակավայրի:

Մարդահամարը վերոնշյալ հիմնարկներում և կազմակերպություններում անցկացվում է մեկ (**առաջին**) օրվա ընթացքում՝ **հոկտեմբերի 12-ին**: Մարդահամարի հետագա օրերին, նոր ժամանած անձանց համար՝ մարդահամարն անցնելու մասին տեղեկանքի բացակայության դեպքում լրացվում է միայն հսկիչ թերթ (Ձև թիվ 4):

23. Մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման հիմնարկներ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ), քրոնիկական հիվանդների համար նախատեսված հիվանդանոցներում, հյուրանոցներում և նմանատիպ այլ հիմնարկներում/կազմակերպություններում մշտապես (սովորաբար) բնակվողների հաշվեգրումն իրականացնում են այդ հիմնարկների, կազմակերպությունների վարչակազմի կողմից առանձնացված և ՀՀ ԱՎԾ կողմից հրահանգավորված հաշվարարները:

24. Մշտական բնակատեղ չունեցող անձանց՝ *անօթևանների* հաշվեգրումն անցկացվում է նրանց գիշերելու վայրերում՝ հավաքատեղերում, որոնց ցանկը նախապես ճշգրտվում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների հետ: Նման կարգավիճակում գտնվող անձանց հաշվեգրումն իրականացվում է մեկ գիշերվա ընթացքում՝ ըստ այդ վայրերում ստեղծված համապատասխան տեղամասերի՝ մարդահամարի, հրահանգչական կամ հաշվային:

25. ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագրում (հարցաշարում) նախատեսված է ընդգրկել, համատարած դիտարկմամբ, ամբողջ բնակչությանը վերաբերող հետևյալ անհատական հարցերը՝

- ազգանուն, անուն, հայրանունը
- ազգակցական կապը տնային տնտեսության առաջինը գրված անդամի հետ,
- սեռը,
- ծննդյան օրը, ամիսը, տարին,
- ծննդավայրը,
- քաղաքացիության երկիրը/երկրաքաղաքացիության դեպքում նաև երկրորդ երկիրը,
- ազգությունը,
- մայրենի լեզուն և այլ լեզու, որին ազատ տիրապետում է,
- կրոնական դավանանքը,
- ծննդյան օրվանից տվյալ բնակավայրում անընդհատ բնակվելը,
- **ծննդյան օրվանից տվյալ բնակավայրում անընդհատ չբնակվելու դեպքում՝**
  - տարեթիվը, որից սկսած անընդհատ բնակվում է տվյալ բնակավայրում,
  - նախկին բնակության երկիրը,
  - ինչպիսի բնակավայրից է եկել (քաղաքային, գյուղական),
- գոյության միջոցի հիմնական աղբյուրը,
- կրթությունը, գիտական աստիճանը,
- **սովորողների համար՝** ուսումնական հաստատության տեսակը,
- ամուսնական կարգավիճակը,

**15 և բարձր տարիքի իգական սեռի ներկայացուցիչների համար՝**

- քանի՞ երեխա է ծննդաբերել,
- նրանցից քանիսն են ողջ,
- աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք ունենալը մարդահամարի հաշվեգրման պահից մեկ շաբաթ առաջ՝ հոկտեմբերի 4-11-ը,
- հիմնական աշխատավայրի գործունեության տեսակը,
- զբաղմունքը հիմնական աշխատավայրում,
- զբաղվածության կարգավիճակը,

***աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք չունեցող անձանց համար՝***

- աշխատանք փնտրելը,
- առաջին անգամ է փնտրում աշխատանք,
- համապատասխան աշխատանք առաջարկելու դեպքում պատրաստ է անցնել աշխատանքի առաջիկա երկու շաբաթվա ընթացքում,

***եթե չի փնտրում աշխատանք՝***

- պատճառը:

***Մարդահամարի հաշվառման պահին բնակավայրից բացակայող անձանց համար նախատեսված են նաև՝***

- բացակայության ժամկետի (ամիսներով),
- պատճառի/նպատակի,
- մարդահամարի հաշվեգրման պահին անձի գտնվելու երկրի (Հայաստանում գտնվելու դեպքում՝ մարզի) մասին հարցերը:

***Մարդահամարի հաշվառման պահին ժամանակավոր ներկա գտնվող անձանց համար նախատեսված են հետևյալ հարցերը՝***

- ազգանուն, անուն, հայրանունը, ժամանակավոր գտնվելու
  - ժամկետը (ամիսներով),
  - պատճառը/նպատակը,
- մշտական բնակության երկիրը,
- ազգակցական կապը տնային տնտեսության առաջինը գրված անդամի հետ,
- սեռը,
- ծննդյան օրը, ամիսը, տարին,
- ծննդավայրը,
- քաղաքացիության երկիրը/երկրաբազմաքաղաքացիության դեպքում նաև երկրորդ երկիրը:

***Տնային տնտեսության բնակության պայմանների վերաբերյալ հետևյալ հարցերը՝***

- բնակելի միավորով ապահովվածությունը,
- ու՞մ սեփականությունն է հանդիսանում բնակելի միավորը,

***բնակելի շինության***

- տեսակը,
- շահագործման հանձնման տարեթիվը,
- արտաքին պատերի շինանյութը,
- տնային տնտեսության զբաղեցրած սենյակների թիվը,
- բնակելի միավորի ընդհանուր մակերեսը,

***բնակելի շինության բարեկարգվածությունը՝***

- հիմնական (ստացիոնար) հեռախոսի առկայությունը,
- համակարգչի առկայությունը,



- համակարգիչն ինտերնետին միացված լինելը,
- ջեռուցման հիմնական միջոցը,
- ջրհեռացման (կոյուղացման) համակարգը,
- ջրամատակարարման հիմնական աղբյուրը,
- լոգարանի կամ ցնցուղի առկայությունը,
- զուգարանի առկայությունը,
- աղբահանման ձևը:

Տնային տնտեսության գյուղատնտեսությամբ զբաղվելուն վերաբերող հարցերը՝

- տնային տնտեսության գյուղատնտեսությամբ զբաղվելը,
- տնտեսության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի տարածքները՝ ներառյալ վարձակալության տրվածը,
- տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (գլուխ),
- տնային տնտեսության ակվակուլտուրաների արտադրությամբ (ձկնորսություն, ձկնաբուծություն) զբաղվելը:

**Տնային տնտեսությանը տրվող ընդհանուր բնույթի 2 այլ հարց  
Վերջին 12 ամիսների ընթացքում**

- արտերկրում գտնվող հարազատներից և բարեկամներից դրամական միջոցներ ստանալը,
- տնային տնտեսությունում տեղի ունեցած ծնունդների և մահվան դեպքերի վերաբերյալ համապատասխան գրանցումների առկայության մասին հարցերը:

26. ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ բնակչության հարցումն իրականացվում է մարդահամարի հարցաթերթում (մարդահամարի ծրագրով սահմանված) բնակչության յուրաքանչյուր կատեգորիայի և տարիքային խմբի համար նախատեսված հարցերի համաձայն: Մարդահամարի հարցաթերթում հարցերը ձևակերպվում են այնպես, ինչպես հաշվարարն այն ուղղելու է հարցվողին կամ հարցմանը պատասխանող տնային տնտեսության չափահաս այն անդամին, ով կարող է պատասխանել մյուս անդամներին վերաբերող հարցերին:

27. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն մարդահամարի վերջնական արդյունքներն օգտագործվելու են միայն ամփոփված և խմբավորված տեսքով: Մարդահամարի սկզբնական (անհատական) տվյալները գաղտնի են և ենթակա չեն հրապարակման: Մարդահամարի բոլոր փաստաթղթերը պահպանվում են լիազոր մարմնի կողմից սահմանած կարգով:

28. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ բնակչության վերաբերյալ անհատական տեղեկություններին տիրապետող աշխատակիցներին *արգելվում է որևէ մեկին*

*հաղորդել մարդահամարի լրացված փաստաթղթերի բովանդակությունը:*  
Մարդահամարի սկզբնական (անհատական) տվյալների օգտագործման կարգի խախտման դեպքում մարդահամարի աշխատողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## II ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

29. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **6-րդ հոդվածի** համաձայն, մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման աշխատանքների պատասխանատուն **վիճակագրության պետական լիազորված մարմինն է՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:**

Մարդահամարի նախապատրաստման և անցկացման բոլոր աշխատանքներն իրականացվում է ՀՀ ԱՎԾ **մարդահամարի վարչության**, Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում՝ ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալությունների կողմից, իսկ մարդահամարի նյութերի մշակման և հրապարակման աշխատանքներն իրականացվում են կենտրոնացված՝ մարդահամարի վարչությունում: Նշված աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններին տրամադրվում են մարդահամարի աշխատանքները համակարգողների ժամանակավոր հաստիքներ:

30. Մարդահամարի անցկացման աշխատանքները ՀՀ տարածքում կազմակերպելու և իրականացնելու համար ժամանակավորապես ձևավորվում են մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասեր՝ մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի, հրահանգիչ-հսկիչի և հաշվարարների **անհրաժեշտ թվակազմով:**

## III ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

31. Մարդահամարը ժամանակին անցկացնելու, ինչպես նաև բնակչության հաշվեգրման ամբողջականությունն ապահովելու համար հանրապետությունում **անհրաժեշտ է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները (սխեման տես՝ հավելված 2-ում).**

### Մինչև 2011 թվականի ապրիլի 1-ը

31.1. ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններին տրամադրել «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» Ձև թիվ 1-բնակբնութագիր պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի **անհրաժեշտ քանակ՝ բազմաբնակարան շենքերի համար, անկախ սեփականության ձևից և պատկանելությունից:**

### **Մինչև 2011 թվականի մայիսի 1-ը**

31.2. Ապահովել ՀՀ մարզերի քաղաքային համայնքներին և խոշոր գյուղերին (5 000 և ավելի բնակչություն ունեցող) սխեմատիկ հատակագծերով:

### **Մինչև 2011 թվականի հունիսի 10-ը**

31.3. Իրականացնել քաղաքային համայնքներում և խոշոր գյուղերում տների (շինությունների) ցուցակների կազմումը:

Այս աշխատանքն իրականացնելու համար հավաքագրել ժամանակավոր աշխատողներ՝ **ցուցակագրողներ**: Մեկ ցուցակագրողի միջին օրական աշխատանքային նորման սահմանվում է 30 տան գրառումը՝ ըստ իրեն հատկացված ցուցակագրման տեղամասի, իսկ աշխատանքները պետք է կատարվեն մեկ ամսվա ընթացքում: **Բնակավայրի կառուցապատման բնույթով և դիրքով պայմանավորված աշխատանքային նորմաները կարող են տարբերվել**: Ընդ որում, ցուցակների կազմման ժամանակ ցուցակագրողը, ըստ անհրաժեշտության, պետք է ճշգրտի նաև բնակավայրի սխեմատիկ հատակագիծը:

31.4. Գյուղական համայնքներում կազմել գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները: Այս աշխատանքն իրականացվում է **գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների կողմից**՝ ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժինների աջակցությամբ:

### **Մինչև 2011 թվականի հունիսի 15-ը**

31.5. Ապահովել կազմված տների/շինությունների և գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների ընդունումը և կազմված ամփոփ տեղեկագրերը (**Ձև թիվ 3-ամփոփ, Ձև թիվ 4-ամփոփ, Ձև թիվ 5-ամփոփ, Ձև թիվ 6-ամփոփ**) ներկայացնել ՀՀ ԱՎԾ:

31.6. ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի հետ համատեղ ճշգրտել քաղաքային համայնքների սահմանները, ինչպես նաև ապահովել փողոցների անվանումների, թաղամասերի և տների համարակալման կարգավորումը, համարանիշերի և անվանացույցների տեղադրումը:

### **2011 թվականի սեպտեմբերից մինչև դեկտեմբեր**

31.7. ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններին և դրանց տարածքային բաժիններին՝ մարդահամարի նախնական և վերահսկիչ շրջագայության, անցկացման և նյութերի հանձնման ողջ ժամանակահատվածի համար ապահովել մարդահամարի և հրահանգչական տեղամասերի ժամանակավոր աշխատանքային գրասենյակներով՝ գրասենյակային գույքի և հեռախոսակապի առկայությամբ:

32. 2011 թվականի հունիս-հուլիս ամիսներին ՀՀ ԱՎԾ Երևանի քաղաքային և մարզային գործակալություններն ու դրանց տարածքային բաժիններն իրականացնում են մարդահամարի նախապատրաստման և անցկացման **կազմակերպական պլանների** կազմումն՝ ըստ Երևան քաղաքի ու վարչական շրջանների և ըստ ՀՀ մարզերի ու տարածաշրջանների: Կազմակերպման պլանն ընդգրկում է՝ **մարդահամարային շրջանացում** (տարածքի բաժանումը մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի), **մարդահամարային կադրերի պահանջարկի հաշվարկ**, ինչպես նաև նրանց **հավաքագրման և ուսուցման (հրահանգավորման) ժամանակացույցի** և բնակչության շրջանում մարդահամարը լուսաբանող զանգվածային-բացատրական աշխատանքների **ծրագրի** կազմում:

33. Վարչական շրջանների, տարածաշրջանների և քաղաքների բաժանումը մարդահամարի, հրահանգչական և հաշվային տեղամասերի, կատարվում է տների (շինությունների) ցուցակների, գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների, հիվանդանոցների, առողջարանների, հանգստյան տների, հյուրանոցների և նմանատիպ այլ հիմնարկների, կազմակերպությունների ցուցակների ու համապատասխան քարտեզագրական նյութերի, ինչպես նաև մարդահամարային անձնակազմի համար սահմանված աշխատանքային միջին նորմաների հիման վրա:

34. **Քաղաքներում հիմնական հաշվային տեղամասերը** (առանց հյուրանոցներում, առողջարաններում, հանգստյան տներում, հիվանդանոցներում և նմանատիպ այլ կազմակերպություններում ձևավորված հաշվային տեղամասերի) կարող են կազմվել տան (շենքի) մասից, մի ամբողջ տնից (շենքից), մեկ տնից (շենքից) և մյուսի մի մասից կամ մի քանի տներից (շենքերից), որոնք ընդգրկում են **միջին հաշվով 320 բնակիչ**:

35. **Գյուղական համայնքներում հաշվային տեղամասերը** կարող են կազմվել բնակավայրի մի մասից, ամբողջ բնակավայրից, ինչպես նաև մի քանի բնակավայրերից՝ ընդգրկելով **միջին հաշվով 270 բնակիչ**:

36. Հաշվարարի առավելագույն աշխատանքային նորման, որպես կանոն, չպետք է գերազանցի **քաղաքներում 400 բնակչի**, իսկ **գյուղական վայրերում՝ 320 բնակչի հաշվեգրումից**:

37. Առանձին հաշվային տեղամասերի կարող են բաժանվել միայն այն տները (շենքերը) կամ գյուղական բնակավայրերը, որոնցում բնակչության թվաքանակը գերազանցում է մեկ հաշվարարի առավելագույն աշխատանքային նորման:

38. **Քաղաքներում տարբեր տների (շենքերի) մասերի, իսկ գյուղական վայրերում տարբեր գյուղական բնակավայրերի մասերի միավորումը մեկ հաշվային տեղամասի մեջ չի թույլատրվում**:

39. **Քաղաքներում** հրահանգչական տեղամաս է ձևավորվում միջին հաշվով 5 հիմնական հաշվային տեղամասերից, իսկ գյուղական վայրերում՝ 6

հիմնական հաշվային տեղամասերից: Հրահանգիչ-հսկիչի առավելագույն ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի քաղաքներում 2,0 հազար մարդը, իսկ գյուղական վայրերում 1,8 հազար մարդը:

40. Քաղաքների հրահանգչական տեղամասի մեջ, որպես կանոն, մտնում են մեկ կամ մի քանի հարակից թաղամասեր (զանգվածներ), իսկ գյուղական վայրերում՝ մեկ կամ մի քանի գյուղական բնակավայրեր: Հրահանգչական տեղամասերի միջև բաժանվում են միայն այն քաղաքային թաղամասերը (զանգվածները), գյուղական բնակավայրերը, որոնց բնակչությունը գերազանցում է մեկ հրահանգիչ-հսկիչի առավելագույն աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Չի թույլատրվում քաղաքի տարբեր թաղամասերի (զանգվածների), գյուղական բնակավայրերի մասերը միավորել մեկ հրահանգչական տեղամասի մեջ:

41. *Քաղաքային և գյուղական վայրերի մարդահամարի տեղամաս*, որպես կանոն, ձևավորվում է, միջին հաշվով, 9 հիմնական հրահանգչական տեղամասերից: Ձևավորված մարդահամարի տեղամասի բնակչության առավելագույն թվաքանակը չպետք է գերազանցի քաղաքներում՝ 22 հազար մարդը, իսկ գյուղական վայրերում՝ 17 հազար մարդը:

42. Քաղաքներում և տարածաշրջաններում մարդահամարի տեղամասերը ստեղծվում են այն հաշվով, որ պահպանվի վարչատարածքային բաժանման ամբողջականությունը:

43. Մարդահամարի անցկացման տարածաշրջանային կազմակերպման պլանները կազմում են ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունները *մինչև 2011թ. օգոստոսի 1-ը*, իսկ Մարդահամարի վարչությունը դրանք հաստատում է *մինչև օգոստոսի 20-ը*:

44. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **4-րդ հոդվածի** համաձայն, մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին օժանդակելու նպատակով ստեղծվել են ՀՀ 2011թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ, որոնց կազմը հաստատել է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (**ՀՀ կառավարության 26.03.2009թ. թիվ 301-Ն որոշում**):

45. Մարդահամարի նպատակների ու խնդիրների, անցկացման կարգի և ժամկետների մասին բնակչությանը պարբերաբար իրազեկելու նպատակով ՀՀ ԱՎԾ կողմից մշակվում է զանգվածային-բացատրական աշխատանքների ծրագիր, որով պետք է նախատեսվի.

1) մարդահամարին առնչվող հարցերի լուսաբանումը մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ,

2) գունավոր պաստառների, բուկլետների, ինչպես նաև փոստային ծրարների, օրացույցների և մարդահամարը լուսաբանող այլ նյութերի հրատարակում և տարածում:

## IV ՄԱՐԴԱՀԱՄԱՐԱՅԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

46. Մարդահամարի անցկացման և հավաքագրված նյութերի տեղեկատվության մեքենայական մշակմանը նախապատրաստելու համար հավաքագրվում են համապատասխան որակավորում ունեցող ժամանակավոր աշխատողներ:

47. Ուսուցում և գիտելիքների ստուգում անցնելուց հետո մարդահամարի աշխատանքներում ժամանակավոր ընդգրկված աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ ըստ մարդահամարի աշխատանքների նախահաշվով սահմանված դրույքաչափերի:

48. Մարդահամարի կազմակերպման, անցկացման և հավաքագրված տեղեկատվության մեքենայական մշակման գործառույթներում ժամանակավոր աշխատողները ներգրավվում են հետևյալ ժամկետներով.

ա. հաշվարարները՝ **30 օրացուցային օրով,**

բ. հրահանգիչ-հսկիչները՝ **45 օրացուցային օրով,**

գ. մարդահամարի տեղամասերի վարիչները և նրանց օգնականները՝  
**2.5 ամսով,**

դ. ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններում մարդահամարի աշխատանքները համակարգողները՝ **10 ամսով,**

ե. ծածկագրողները՝ **6 ամսով,**

զ. օպերատոր-մուտքագրողները՝ **6 ամսով:**

49. Մարդահամարի կազմակերպման, անցկացման և հավաքագրված տեղեկատվության վիճակագրական մշակման աշխատանքների անցկացումը սահմանված կարգով և պատասխանատվությամբ իրականացնելու համար իրականացվում է Մարդահամարի վարչության աշխատակազմի և ընդգրկված ժամանակավոր անձնակազմի ուսուցում (հրահանգավորում).

**1) մարդահամարի նախապատրաստման և անցկացման հարցերով.**

ա. մարդահամարի վարչության աշխատակազմի,

բ. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային և Երևան քաղաքի գործակալության և դրանց տարածքային բաժինների պատասխանատուների և մարդահամարի աշխատանքները մարզերում համակարգողների,

գ. մարդահամարի տեղամասերի վարիչների և նրանց օգնականների,

դ. հրահանգիչ-հսկիչների,

ե. հաշվարարների հետ:

**2) հավաքագրված տեղեկատվությունը մեքենայական մշակման նախապատրաստելու հարցերով.**

ա. Մարդահամարի վարչության աշխատակիցների,

բ. ծածկագրողների հետ:

**3) հավաքագրված տեղեկատվության մուտքագրման հարցերով.**

ա. Մարդահամարի վարչության տեխնոլոգիաների և մեքենայական մշակման բաժնի աշխատողների,

բ. օպերատոր-մուտքագրողների հետ:

50. Մարդահամարի աշխատանքներում ժամանակավոր հիմունքներով ներգրավված աշխատողներին՝ հաշվարարներին, հրահանգիչ-հսկիչներին, մարդահամարի տեղամասերի վարիչներին, նրանց օգնականներին տրվում են համապատասխան վկայականներ:

**V ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

51. 2011 թվականի **հոկտեմբերի 8-10-ը՝ 3** օրվա ընթացքում, հաշվարարները կատարում են իրենց հաշվային տեղամասի մշտական և ժամանակավոր կացատեղ հանդիսացող բոլոր տների, շինությունների **նախնական շրջագայություն** և ճշգրտում են հրահանգիչ-հսկիչի կողմից քաղաքների համար՝ տների (շինությունների), գյուղական վայրերի համար՝ գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակներից նախապես իրենց հուշատետրերում գրանցված տվյալները:

52. Նախնական շրջագայության ժամանակ հաշվարարն իր հուշատետրում առանձին տողով գրանցում է՝ քաղաքներում յուրաքանչյուր բնակարան, մեկ բնակարանանոց տուն, հանրակացարանի սենյակ, նշելով փողոցի անվանումը, տան, բնակարանի համարը և բնակվողների թվաքանակը, իսկ գյուղական վայրում՝ բնակավայրի անվանումը, տան (շինության) համարը կամ տանտիրոջ ազգանունն ու անվան, հայրանվան սկզբնատառերը (բազմաբնակարան շենքերում՝ նաև բնակարանի համարը կամ վարձակալի ազգանունն ու անվան, հայրանվան սկզբնատառերը) և դրանցում բնակվողների թվաքանակը:

53. Նախնական շրջագայության ընթացքում յուրաքանչյուր տանը (շինությունում) հաշվարարը բնակչությանը տեղեկացնում է կայանալիք մարդահամարի մասին, պարզում է, թե երբ է հարմար հաշվեգրել տվյալ տանը, բնակարանում ապրողներին, հատկապես այն անձանց, ում դժվար է տանը գտնել և իր հուշատետրում կատարում է համապատասխան նշումներ:

54. Մարդահամարի նախօրեին (հոկտեմբերի 11-ին) հաշվարարը հրահանգիչ-հսկիչից ստանում է մարդահամարի տվյալների հավաքագրումն իրականացնելու համար անհրաժեշտ քանակությամբ մարդահամարի հարցաթերթեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

55. Հաշվարարը մարդահամարն անցկացնում է շրջագայելով իր հաշվային տեղամասի, առանց բացառության, բոլոր շինությունները, որտեղ ապրում կամ կարող է ապրել մշտական բնակչություն՝ ներառյալ ժամանակավոր:

56. *Մարդահամարի ժամանակ հարցման միավոր են հանդիսանում տնային տնտեսությունները՝ անհատական կամ խմբային, այսինքն՝ մարդահամարի հարցաթերթ է լրացվում* յուրաքանչյուր տնային տնտեսության համար՝ ընդ որում, առաջինը գրվում է տնային տնտեսության չափահաս անդամներից մեկը, որից հետո տվյալ տնային տնտեսության մյուս անդամները:

57. Հարցաթերթի լրացումը կատարվում է հաշվարարի կողմից՝ բնակչությանը հարցում անելու և պատասխանները հարցաթերթում գրառելու միջոցով:

58. Հաշվարարի այցելության ժամանակ տնային տնտեսությունում բնակվողներից որևէ մեկի բացակայության դեպքում, հաշվարարը նրա մասին տեղեկություններ կարող է ստանալ տնային տնտեսության մյուս անդամներից, եթե նրանք կարող են սպառիչ պատասխաններ տալ մարդահամարի հարցաթերթի բոլոր հարցերին: Եթե նրանք բացակայողի վերաբերյալ պահանջվող տեղեկություններ չեն կարող տալ, ապա հաշվարարը մարդահամարի հարցաթերթում գրում է բացակայողի ազգանուն, անուն, հայրանունը և նրան անձամբ հարցման է ենթարկում տվյալ տնային տնտեսություն կրկնակի այցելության ժամանակ:

59. ՀՀ 2011թ. մարդահամարի ժամանակ հաշվեգրման ենթակա, սակայն մարդահամարի անցկացման ժամանակաընթացքում՝ հոկտեմբերի 12-21-ը, ամբողջ կազմով բացակայող տնային տնտեսությունների մասին տեղեկությունները հաշվարարը ստանում է հարևաններից, համատիրությունից, հավատարմագրային կամ լիազորագրային կառավարիչներից, թաղային կամ գյուղական համայնքներից:

60. Հյուրանոցներում, հիվանդանոցներում, առողջարաններում և ժամանակավոր կացատեղ հանդիսացող այլ հիմնարկներում/կազմակերպություններում, ինչպես նաև օդանավակայաններում որպես ժամանակավոր ներկա հաշվեգրված անձանց հաշվարարը տալիս է նաև **տեղեկանք մարդահամարն անցնելու մասին** (Ձև թիվ 5), որը բնակչության կողմից պահվում է մինչև մարդահամարի և վերահսկիչ շրջագայության ավարտը (մինչև հոկտեմբերի 26-ը)՝ ըստ անհրաժեշտության այն ներկայացնելու համար:

61. Մեկից ավելի բնակարան (տուն, առանձնատուն և այլն) ունեցող անձանց կրկնակի հաշվեգրումից խուսափելու համար, նրանց վերաբերյալ կազմվում է **վերահսկիչ փաստաթուղթ** (Ձև թիվ 6) այն հաշվային տեղամասի հաշվարարի կողմից, ով իրականացնում է հարցվողի հաշվառումը, այսինքն՝ նրա հաշվեգրումը մարդահամարի հարցաթերթում: Վերահսկիչ փաստաթղթի առաջին էջում լրացվում է տվյալ անձի մշտական բնակության հասցեն, որտեղ հիշյալ անձն անցել է մարդահամար, իսկ երկրորդ էջում՝ հարցվողի կողմից նշված երկրորդ հասցեն, որտեղ նրան պետք չէ հաշվեգրել: Բոլոր այն անձանց,



ում համար հաշվարարը լրացնում է վերահսկիչ փաստաթուղթ, տալիս է նաև տեղեկանք մարդահամարն անցնելու մասին:

62. Մարդահամարի հարցաթերթի հարցերի պատասխանները լրացվում են ՀՀ 2011թ. մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին հրահանգի համաձայն՝ գրելով բերված հուշումներից մեկի կամ մի քանիսի ծածկագրերը, կամ թվեր, կամ բառեր՝ տվյալ հարցի համար առանձնացված գոտում:

63. Յուրաքանչյուր տնային տնտեսությունում հաշվեգրման ենթակա անձանց վերաբերյալ մարդահամարի հարցաթերթում տեղեկությունները լրացնելուց հետո հաշվարարը հաշվում է դրանց հանրագումարն՝ ըստ տվյալ տնային տնտեսության և համապատասխան գրառումներ կատարում հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրում (Ձև թիվ 6-քաղաքային, Ձև թիվ 6-գյուղական) առանձին տողով, իսկ մարդահամարի ավարտից հետո ամփոփ տեղեկագրում հաշվարկում և հանրագումարի է բերում հաշվային տեղամասի վերաբերյալ տվյալները:

64. Մարդահամարի անցկացման ողջ ժամանակաընթացքում՝ հոկտեմբերի 12-21-ը, հրահանգիչ-հսկիչն ամեն օր ստուգում է իր տեղամասի հաշվարարների կողմից լրացված մարդահամարային փաստաթղթերը: Մարդահամարի ավարտին զուգընթաց հրահանգիչ-հսկիչը հաշվարարներից ընդունում է մարդահամարի նյութերը և հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերի ճշգրտված տվյալների հիման վրա կազմում է հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագիր (Ձև թիվ 7- քաղաքային/գյուղական):

65. Մարդահամարի ավարտից հետո՝ **հոկտեմբերի 22-26-ը** հրահանգիչ-հսկիչն իր տեղամասի հաշվարարների հետ միասին անցկացնում է **ընտրանքային վերահսկիչ շրջագայություն**, պայմանով, որ յուրաքանչյուր հաշվարար կատարի ոչ թե իր, այլ կից հաշվային տեղամասի վերահսկիչ շրջագայությունը: Վերահսկիչ շրջագայությունն անցկացվում է բոլոր հաշվային տեղամասերում՝ յուրաքանչյուրում ընդգրկելով բնակելի միավորների (բնակարանների) 10%-ը: Դրանց ընտրանքը կատարում է մարդահամարի տեղամասի վարիչը կամ նրա օգնականը՝ հրահանգիչ-հսկիչի հետ համատեղ:

66. Վերահսկիչ շրջագայության ժամանակ հրահանգիչ-հսկիչն ու հաշվարարն այցելում են ընտրված բնակելի միավորները և լրացնում են վերահսկիչ շրջագայության աղյուսակ (Ձև թիվ 9 հավելված 1՝ Վերահսկիչ շրջագայության (շրջայց) ամփոփագիր):

**VI ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ՈՒ  
ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇԱԿՈՒՄԸ**

67. 2011 թ. նոյեմբերի 1-ից մինչև 30-ն իրականացվում է ՀՀ 2011թ. մարդահամարի նյութերի՝ ըստ վերադասության ընդունում-հանձնումը (սխեման տես՝ հավելված 3-ում):

68. Այն պետք է իրականացվի համաձայն «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նյութերի (հաշվառման փաստաթղթերի) ընդունման-հանձնման» կարգի:

69. ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատուներից մարդահամարի նյութերի ընդունման ընթացքում ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունները կատարում են այդ նյութերի ամբողջականության և որակի ստուգում: Այդ աշխատանքի ավարտին զուգընթաց կատարվում է մարդահամարի հարցաթերթերով պայուսակների համարակալումը բնակավայրերի սահմաններում, այնուհետև դրանց հանձնումը ՀՀ ԱՎԾ Մարդահամարի վարչություն՝ սահմանված ժամկետում և կարգով:

70. **2011թ. դեկտեմբերի 1-ից՝ 6 ամսվա կտրվածքով** մարդահամարի նյութերի նախապատրաստումը մեքենայական մշակման կատարվում է կենտրոնացված կարգով՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում՝ Մարդահամարի վարչության կազմում այդ նպատակով ժամանակավորապես ներգրավված աշխատախմբի՝ ծածկագրողների կողմից: Այս գործընթացի ընթացքում իրականացվում է մարդահամարի հարցաթերթի համապատասխան հարցերի պատասխանների ծածկագրում:

71. **2012 թ. հունվար ամսից մինչև հունիս** մարդահամարի հարցաթերթի տվյալների մեքենայական մշակման իրականացում՝

1) այդ աշխատանքի համար ժամանակավորապես հավաքագրված մուտքագրող-օպերատորների կողմից հարցաթերթի տվյալների մուտքագրում,

2) մեքենայացված ծրագրով տվյալների բազայի տրամաբանական ստուգում և ուղղում,

3) էլքային ամփոփ աղյուսակների ստացում:

Մարդահամարի արդյունքներով ստացվում է մեծածավալ տեղեկատվություն: Ելքային աղյուսակները ստացվում են մի քանի փուլերով՝ սկսած 2012թ. 2-րդ կիսամյակից: Մարդահամարի նյութերի ամբողջական մշակումը նախատեսվում է ավարտել **2013 թվականի վերջին:**

## VII ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

72. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 301-Ն որոշման համաձայն **2010 թվականի հոկտեմբերի 21-30-ը** ներառյալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գետահովիտի, Գանձաքարի, Աչաջուրի և Խաշթառակի գյուղական համայնքներում անցկացվեց **փորձնական մարդահամար**:

73. «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն **փորձնական մարդահամարն** անց է կացվում մարդահամարի մեթոդաբանական, կազմակերպական սկզբունքների, նյութերի մեքենայական մշակման ծրագրերի և տեխնոլոգիայի փորձարկումն իրականացնելու համար:

74. Փորձնական մարդահամարի ժամանակ փորձարկման է ենթարկվում նաև մարդահամարի Ծրագիրը (հարցաշարը), որում նախատեսված հարցերն ընտրելիս հաշվի էր առնվել միջազգային վիճակագրական չափորոշիչներին երկրի ցուցանիշների համադրելիության ապահովման, ինչպես նաև երկարաժամկետ միջակայքում, միտումների բացահայտման տեսանկյունից, դրանց հնարավոր կայուն պարբերականության պահպանման հանգամանքը:

75. Փորձնական մարդահամարի նյութերի մշակման ընթացքում ստացված նախնական ցուցանիշների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև անցկացման ընթացքում առաջացած հարցերը հիմք են հանդիսացել մարդահամարի ընթացքում առաջացած մեթոդաբանական և կազմակերպչական սկզբունքների ճիշտ ձևավորման համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



**ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- Մշտական  
բնակավայր** - Որպես կանոն համարվում է աշխարհագրական այն վայրը՝ քաղաք, գյուղ, տուն, բնակարան, որտեղ մշտապես (սովորաբար) հարցվողն անցկացնում է իր ժամանակի մեծ մասը: Այդ վայրը կարող է համընկնել կամ չհամընկնել հարցվողի գրանցման (հաշվառման) հասցեի հետ:
- Մարդահամարի  
հաշվառման  
(կրիտիկական)  
պահ** - Մարդահամարի կարևորագույն հատկանիշներից մեկը՝ տեղեկությունների հավաքագրման միաժամանակությունն է: Բնակչությունն ամբողջ հանրապետությունում հաշվառվում է, հնարավորության սահմաններում, միևնույն հստակ սահմանված պահի դրությամբ, որը համարվում է **կրիտիկական պահ**:  
ՀՀ 2011թ. մարդահամարի համար այն սահմանվել է մարդահամարի առաջին օրվա կեսգիշերը՝ (հոկտեմբերի 11-ի լույս 12-ի կեսգիշերը՝ 00 ժամը):
- Ժամանակավոր  
ներկա** - Անձ, ով մարդահամարի կրիտիկական պահին՝ հոկտեմբերի 11-ի լույս 12-ի կեսգիշերը՝ 00 ժամին, գտնվել է տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն) կամ ժամանակավոր կացատեղ հանդիսացող հիմնարկում, կազմակերպությունում, սակայն նրա մշտական բնակավայրը գտնվում է տվյալ համայնքի սահմաններից դուրս, և նրա գտնվելու տևողությունը՝ նշված պահի դրությամբ չի գերազանցել մեկ տարին:
- Ժամանակավոր  
բացակա** - Անձ, ով մշտապես (սովորաբար) բնակվում է տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ տուն (շինություն), սակայն մարդահամարի կրիտիկական պահին՝ հոկտեմբերի 11-ի լույս 12-ի կեսգիշերը՝ 00 ժամին, գտնվել է տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի սահմաններից դուրս և նրա գտնվելու բացակայությունը՝ նշված պահի դրությամբ չի գերազանցել մեկ տարին:
- Մշտական  
բնակչություն** - Յուրաքանչյուր վարչական միավորի մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշներում, որպես կանոն, ներառվում են մարդահամարի ժամանակ տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր (մինչև 1 տարի ժամկետով) բացակա հաշվեգրված անձանց ընդհանուր թվաքանակների ցուցանիշների հանրագումարը:

- Առկա բնակչություն**
- Յուրաքանչյուր վարչական միավորի առկա բնակչության թվաքանակի ցուցանիշներում, որպես կանոն, ներառվում են մարդահամարի ժամանակ տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր ներկա հաշվեգրված անձանց ընդհանուր թվաքանակների ցուցանիշների հանրագումարը:
- Հաշվառում (հաշվառել)**
- Մարդահամարի ընթացքում հաշվարարի կողմից բնակչության հարցման միջոցով մարդահամարի հարցաթերթի լրացման գործընթացը:
- Ձև թիվ 1- Բնակբնութագիր**
- Մարդահամարի հարցաթերթի «Տնային տնտեսության բնակության պայմանները» բաժնում բազմաբնակարան շենքերի վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության ճշգրտությունն ապահովելու համար մարդահամարի նախապատրաստման ընթացքում իրականացվում է «**Ձև թիվ 1-Բնակբնութագիր**» հարցաթերթի լրացումը: Այն ներառում է տեղեկություններ բնակելի շինության հասցեի, շահագործման հանձնելու տարեթվի, արտաքին պատերի շինանյութի, յուրաքանչյուր բնակարանի ընդհանուր մակերեսի վերաբերյալ:
- Մարդահամարի աշխատողներ**
- ՀՀ ԱՎԾ, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալության և տարածքային բաժինների մարդահամարի նախապատրաստման և անցկացման հարցերով ընդգրկված աշխատողները, մարդահամարի անցկացման համար ժամանակավորապես ներգրավված մարդահամարի տեղամասերի վարիչները և նրանց օգնականները, հրահանգիչ-հսկիչները, հաշվարարները:
- Հիմնական հաշվային տեղամաս**
- Քաղաքում և տարածքում կազմակերպված հաշվային տեղամասերն առանց ժամանակավոր կացատեղ հանդիսացող հիմնարկներում, կազմակերպություններում (հյուրանոցներ, ծննդատներ, առողջարաններ, հանգստյան տներ, հիվանդանոցներ և նմանատիպ այլ հիմնարկություններ, կազմակերպություններ) կազմակերպված հաշվային տեղամասերի:
- Անհատական տնային տնտեսություն**
- ա) Առանձին բնակելի միավորում, կամ դրա մի մասում բնակվող անձ, ով ինքնուրույն ապահովում է իր համար կենսականորեն անհրաժեշտ ամեն ինչը և ընդհանուր տնտեսություն վարելու նպատակով տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները:
  - բ) Առանձին բնակելի միավորում, կամ դրա մի մասում, կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող 2 և ավելի


անձինք, ովքեր իրենց համար կենսականորեն անհրաժեշտ ամեն ինչն ապահովում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգակցական, կամ և մեկը, և մյուսը:

**Խմբային  
(ինստիտու-  
ցիոնալ )  
տնտեսություն**

- Բնակչության համատեղ խմբերով բնակվող անձինք, ում բնակարանի ու սննդի կարիքները բավարարվում են համապատասխան հիմնարկների կազմակերպությունների, կողմից, և ովքեր սովորաբար ենթարկվում են ընդհանուր կանոնների, սնվում են համատեղ՝ **օրինակ** մանկատներում, գիշերօթիկներում, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններում, կրոնական կազմակերպություններում (մենաստաններում) բնակվողները, քրեակատարողական հիմնարկներում և նման այլ կազմակերպություններում գտնվողները :



# ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ



ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՆ  
ԸՍՏ ՎԵՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ (5 ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ՝ I-V)

